



Զաւակներուս հետ աւելի երկար ժամեր անցնելու ջանք պիտի ընէի: Ըստած է, թէ փոքրիկները սիրաշահելու եւ ուղղելու լաւագոյն ձեւը զանոնք ուրախացնելն է: Ես յաճախ շատ լուրջ կ'ըլլայի զաւակներուս հետ: Անոնց խնդրները շատ անգամ կ'ըլլուած էին իմ խիստ նայուածքներուս տակ: Կը խորիւնէի, թէ ծնողք ըլլալ մշտապէս լռութիւն կը պահանջէ:

Նաեւ կը յիշեմ այն պահերը, ուր զաւակներուս հետ մտերմիկ եւ ուրախ ժամեր կ'անցնէինք կատակներ ընելով եւ զուարթ պատմութիւններ պատմելով: Ամենայն անկեղծութեամբ անոնք կը պատմէին դպրոցի հետաքրքրաշարժ դէպքերէն եւ ընտանեօք կ'ըմբռնէինք զանոնք: Այս տեսակի ուրախ փորձառութիւնները կ'աւելցնէին մեր սէրը, մեր մէջ կը մշակէին գործակցութեան հոգին, եւ այսպէսով մեզ իրարու կը կապէին:

Աւելի լաւ ունկնդիր մը պիտի ըլլայի: Շատերուս համար, մանուկի մը խօսակցութիւնը անկարելի տկարացած շաղակրատում մըն է: Սակայն ես այժմ կը հաւատամ, թէ շատ կենսական կապ մը կ'այ ժամանակն հետաքրքրութիւնները մտիկ ընելու մէջ՝ երբ ան պզտիկ է, եւ այն չափին մէջ որով ան ալ իր կարգին իր հետաքրքրութիւնները պիտի բաժնէ իր ծնողաց հետ, երբ աւելի մեծնայ:

Եթէ զաւակներս կրկին փոքր ըլլային, պիտի փափաքէի աւելի նուազ անհամբեր ըլլալ, երբ անոնք միջամտէին թերթերու ընթերցումիս: Կ'ըսուի, թէ օր մը մանչուկ մը անընդհատ կը փորձէր իր հօրը ցոյց տալ իր մատիկին վրայի սկրթութիւնը: Հայրը վերջապէս դադարեցնելով ընթերցումը, ըսաւ անհամբերութեամբ.

- Լաւ, ես բան մը չեմ կրնար ընել ատոր, այնպէս չէ՞:

- Այո, հայրիկ, ըսաւ փոքրիկ տղան, դուն կրնայիր գտնել «օ՛հ» ըսել:

Անգամ մը կը գտնուէի հօր մը հետ, որ չպատասխանէր, երբ անոր փոքրիկ տղան կրկին եւ կրկին անգամներ զինք կ'անչեց: «Փոքրիկ մանուկ մըն է կ'անչոյդը, հոգ չէ», ըսաւ ան: Կը խորիւնէի թէ շատ չանցած հայրը պիտի կ'անչէ իր տղան եւ ան ալ իր կարգին պիտի համարձակի ըսել՝ «Մեր մարդ մըն է կ'անչոյդը, հոգ չէ»: Զաւակներուս աւելի քաջալերման ցոյց պիտի տայի: Հաւանաբար ոչինչ այնքան պիտի մղէր մանուկ մը՝ սիրելու կեանքը եւ կատարելու նուաճումներ, որքան անկեղծօրէն տրուած գնահատանք մը իր կատարելութեամբ:

Հիմա կը հասկնամ, թէ քաջալերութիւնը կարգապահութեան նպաստող Քլեյի շինիչ տարր մըն է, քան մեղադրանքը կամ յանդիմանութիւնը: Զննադատութիւնը եւ մեղադրանքը կը զրկեն մանուկը ինքնավստահութենէ, այնչ քաջալերանքը կը կերտէ յանձնապատասխանութիւն եւ մանուկը կ'առաջնորդէ հասունութեան: Մարդ արարածը միշտ բաղձանքը ունի գնահատուելու, եւ երբ այս իղձը գոհացում գտնէ մեզ սիրողներու կողմէ, մենք կը սկսինք աճիլ նաեւ ալ շնորհներով:

Ուստի, եթէ հայր ըլլաւու առիթը կրկին տրուէր ինծի, պիտի յարատեւի առօրեայ գովեստներ տալու մէջ, նկատի ունենալով ո՛չ թէ մանկան ներկայ վիճակը, այլ այն՝ ինչ որ ան կրնայ ըլլալ ապագային:

Պիտի փափաքէի զԱստուած աւելի մօտէն ծանօթացնել զաւակներուս: Մենք ամբողջական անձեր չենք ըլլար, երբ կը շեշտենք միայն ֆիզիքականը, ընկերայինն ու իմացականը: Մենք հոգեւոր էակներ ենք: Եթէ մեր նպատակն է ճանչնալ զԱստուած եւ անոր վեհ ծրագիրը, ծնողներ պէտք է որ այս հոգեւոր ճշմարտութիւնները իրենց զաւակներուն փոխանցող առաջին անձերը ըլլան: Իսկ ես աւելի ես պիտի ջանայի զաւակներուս հետ վայելել այս թանկագին հուստը, օգտագործելով զանուգան առիթներ: Փոխանակ աստուածաբանական բարդ հարցերու մասին խորհրատակցելու եւ կամ ընտանեկան պաշտամունքի խիստ օրէնքներ պարտադրելու, աւելի ուշադրութիւն պիտի ընէի թէ ի՞նչ բաներով կը հետաքրքրուի եւ ի՞նչ բաներ կը նկատէ ու կը սիրէ զաւակս:

Անգամ մը ուսուցիչի մը հարցունեցաւ. «Ձեր դպրոցի ծրագրին մէջ ո՞ր կը դասաւանդէք կրօնքը»: «Մենք կրօնք կը դասաւանդենք թուաբանութեան մէջ՝ շեշտելով Հզորութեան հետեւելու անհրաժեշտութիւնը, լեզուական դասերու մէջ՝ սորվելով կիրթ՝ արտայայտելու ձեւը, պատմութեան մէջ՝ մարդասիրութեամբ, աշխարհագրութեան մէջ՝ ընդարձակելով մեր մտապաշարը, աստղագիտութեան մէջ՝ ականաժանքով, եւ բակին մէջ՝ տիպար եւ աշակերտավայել խաղերնացրով: Մենք կրօնք կը սորվեցնենք՝ կենդանիներու հանդէպ աշակերտները ազնիւ վերաբերմունքի վարժեցնելով, իրարու հանդէպ բարի կենցաղի անհրաժեշտութիւնը ներմուծելով եւ ամէն բանի մէջ՝ Հշարտասիրութիւն շեշտելով»: